



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՄԱՆ

№ 61-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի հուլիսի 25-ի թիվ 54-Լ հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված հետևյալ հավելվածների գործողությունը.

1) «Փրկարար ծառայության հոգեբանական աջակցության բաժնի պետ» (թվով 1 (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Գ-1)),

2) «Փրկարար ծառայության հոգեբանական աջակցության ավագ հրահանգիչ՝ հոգեբան» (թվով 1 (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-1)),

3) «Փրկարար ծառայության հոգեբանական աջակցության հրահանգիչ՝ հոգեբան» (թվով 6 (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-2, ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-3, ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-4, ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-5, ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-6, ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-7)),

4) «Փրկարար ծառայության հոգեբանական աջակցության հրահանգիչ» (թվով 1 (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Ա-8)),

5) «Փրկարար ծառայության հոգեբանական աջակցության կրտսեր հրահանգիչ» (թվով 3 (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Կ-1, ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.21-Կ-2, ծածկագիր՝ 27-

2ՓԾ-25.21-Կ-3)):

2. Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության բժշկական ապահովման վարչության պաշտոնների անձնագրերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածների:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

05.08.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2025թ.օգոստոսի 5-ի N 61-Լ հրամանով

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2023թ.հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը.

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հոգեբանական աջակցության և բժշկական ապահովման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.1-Բ-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու Փրկարար ծառայության տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալին (այսուհետ՝ Տնօրեն) Վարչության գործունեությունը համակարգող Տնօրենի տեղակալին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոնները

Վարչության պետին անմիջականորեն ենթակա են Վարչության պետի տեղակալը և ստորաբաժանումների ղեկավարները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը:

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8.

2. Պաշտոնի բնութագիրը

2.1.Աշխատանքի պարտականությունները Գործառույթները՝	բնույթը,	իրավունքները,
---	----------	---------------

պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2. իր իրավասության սահմաններում տալիս է ցուցումներ, հրամաններ և հանձնարարականներ.

3. պարբերաբար տեղեկատվություն է ներկայացնում Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին՝ Վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

4. Տնօրենին (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին) առաջարկություններ է ներկայացնում Վարչության ծառայողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ.

5. ապահովում է Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հրամանների, ցուցումների ու հանձնարարականների կատարումը և զեկուցում արդյունքների մասին.

6. իր իրավասությունների շրջանակներում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

7. ընդունում է Վարչության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, վերլուծում դրանք և միջոցներ ձեռնարկում տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ.

8. օրենքով, այլ իրավական ակտերով, Ծառայության և սույն կանոնադրություններով նախատեսված գործունեության բնագավառներին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Տնօրենին (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին).

9. Տնօրենին (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին) առաջարկություններ է ներկայացնում Վարչության հաստիքներով նախատեսված պաշտոններում կադրերի ընտրության, նշանակման, տեղաբաշխման, տեղափոխման, Վարչության ծառայողներին պաշտոնից ազատման, նրանց նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ կիրառելու և ծառայության հետ կապված այլ հարցերի վերաբերյալ.

10. կազմակերպում է հրշեջ-փրկարարական, հատուկ հրշեջ և փրկարարական ստորաբաժանումների անձնակազմի բժշկական ապահովման աշխատանքները,

11. արտակարգ իրավիճակներում, իր իրավասության շրջանակներում, Տնօրենին (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին) առաջարկություն է ներկայացնում բժշկական ուժերն ու միջոցները ներգրավելու ուղղությամբ,

ղեկավարում է նրանց գործողությունները.

12. ստորագրում է Վարչության անունից պատրաստվող փաստաթղթերը.

13. ապահովում է Վարչության և Ծառայության այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունները.

14. Նախարարի, Տնօրենի (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Իրավունքները՝

1. զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2. իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.

3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

4. մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.

5. աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.

6. իրավական պաշտպանությունը:

7. առողջության պահպանումը.

8. փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.

9. նշանակման արդյունքները բողոքարկելը.

10. արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.

11. մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- կազմակերպել և վերահսկել արտակարգ իրավիճակներում հոգեբանական ծառայության կազմակերպման ուղղությունների և առանձնահատկությունների մշակման և հիմնախնդիրների պլանավորման աշխատանքները.

հոգեբանական խորհրդատվության և տեղում հոգեբանական աջակցության սպասարկման գործընթացը.

- կազմակերպել ահազանգողների տվյալների գրանցման, տեղեկատվության անվտանգության ապահովման և դրանց օգտագործման կարգապահության պահպանումը.

- կարգավորել մասնագիտական մեթոդների կիրառմամբ բնակչության հոգեվիճակի կայունացման և հոգեբանական միջամտության գործընթացները՝ կանխելով բացասական վարքագծերը.

- վերահսկել արտակարգ դեպքերի վայրում հոգեբանական օգնության կարիք ունեցող անձանց հաշվառման, դասակարգման և աջակցման կազմակերպումը՝ ռեսուրսների նպատակային օգտագործմամբ.

- համակարգել համագործակցությունը հոգեբանական ծառայություններ մատուցող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ երկարաժամկետ օգնության և նեղ մասնագիտական աջակցման ապահովման նպատակով.

- կազմակերպել տեղային տարածքներում հոգեբանական խորհրդատվության և աջակցության ցուցաբերում՝ ըստ դիմողի և խորհրդատուի համաձայնության.

- կառավարել հոգեբանական բնութագրի, թեստերի, հարցաշարերի և այլ գործիքների մշակման գործընթացը՝ հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման նպատակով.

- վերահսկել քաղաքացիների և ծառայողների անհատական/խմբային թեստավորման, հարցազրույցների անցկացումը և դրանց արդյունքում ստացված տվյալների մշակումը.

- կազմել և գնահատել բնութագրեր, եզրակացություններ, սարքավորումների տվյալներ՝ ստեղծելով համապարփակ շտեմարաններ.

- հաստատել և վերահսկել ստորաբաժանումների անձնակազմի դիագնոստիկ և վերականգնողական աշխատանքների պլան-ժամանակացույցերի կատարումը.

- կազմել և ներկայացնել առաջարկություններ՝ ուղղված փրկարարների հոգեբանական ծանրաբեռնվածության նվազեցմանն ու կանխարգելմանը.

- ձևավորել մասնագիտական աշխատանքային խմբեր՝ հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների և վերականգնողական աշխատանքների տեղում իրականացման համար.

- զեկուցել և առաջարկություններ ներկայացնել հոգեբանական ծառայության համակարգման, ամրապնդման և զարգացման ուղղությամբ.

- կազմակերպել անձնակազմի մասնագիտական կարողությունների բարձրացման ուսումնամեթոդական գործընթացներ.

տեղեկատվության հոսքը և հոգեբանական ծառայությանն առնչվող բոլոր ընթացակարգերը.

- կազմել և ներկայացնել պլաններ, հաշվետվություններ, եզրակացություններ՝ հասցեագրված ղեկավարությանը, շահագրգիռ ստորաբաժանումներին ու լրատվամիջոցներին.

- համագործակցել հոգեբանական ծառայություններ մատուցող հաստատությունների հետ՝ փորձի փոխանակման, շտեմարանների արդիականացման և մասնագետների միասնական բազայի ստեղծման ուղղությամբ.

- վերլուծել և ներկայացնել առաջարկություններ՝ սարքավորումների ձեռքբերման, տարածքների կահավորման և գործընթացների արդյունավետ կազմակերպման ուղղությամբ.

- ներկայացնել կառույցը միջազգային գիտաժողովներում, սեմինարներում և կոնֆերանսներում՝ կիրառելով լավագույն փորձը.

- կազմակերպել և վերահսկել փրկարարների առաջին հոգեբանական օգնության դասընթացների իրականացումը.

- վերահսկել փրկարարական ծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կազմակերպումը.

- կազմակերպել փրկարարական ծառայողների ստացած վնասվածքների, հիվանդությունների և խեղումների պատճառահետևանքային կապի գնահատման գործընթացը.

- վերահսկել փրկարարների ամենամյա պարտադիր դիսպանսեր բժշկական հետազոտությունների իրականացումն ու համապատասխան եզրակացությունների տրամադրումը.

- կազմակերպել փրկարարական ծառայողների, նրանց ընտանիքների անդամների և կենսաթոշակառուների բժշկական օգնության և սպասարկման գործընթացը.

- իրականացնել արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպում.

- ապահովել արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման գործընթացներին ներգրավված անձնակազմի բժշկական սպասարկման և առողջության պահպանման կազմակերպումը.

- մշակել և ներկայացնել Վարչության ամսական աշխատանքային պլաններ և հաշվետվություններ՝ ներկայացնելով դրանք Տնօրենին (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին).

- մասնակցել միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող համաժողովների, դաշտային վարժանքների և իրավաչափ փաստաթղթերի մշակման գործընթացներին.

պլանը և վերահսկել դրա իրականացումը.

- կազմակերպել բժշկական կազմավորումների և փրկարարների առաջին օգնության դասընթացներ, ապահովելով համապատասխան փաստաթղթային ձևակերպում.

- իրականացնել վերահսկողություն՝ «INSARAG»-ի որակավորում ստացած Հայկական և մարզային թիմերի բժշկական սարքավորումների, գույքի նկատմամբ.

- կազմակերպել «INSARAG»-ի որակավորում ստացած թիմի բժշկական ապահովման գործընթացը.

- ապահովել Վարչությունում շուրջօրյա անհետաձգելի և շտապ բժշկական օգնության հերթապահության կազմակերպումը.

- կազմակերպել «911» հեռախոսահամարով բնակչության բժշկական խորհրդատվության տրամադրումը.

- վերահսկել արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը.

- իրականացնել արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներում ներգրավված անձնակազմի բժշկական սպասարկումը.

- նախապատրաստել և ներկայացնել հաշվետվություններ Տնօրենին (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին) կամ նրա տեղակալին՝ ըստ իրավասության.

- ապահովել Վարչության միջոցառումների պլանների և հաշվետվությունների մշակումն ու գործնական իրականացումը.

- համագործակցել միջազգային կառույցների հետ՝ մասնակցելով մասնագիտական քննարկումների, դաշտային վարժանքների և անհրաժեշտ փաստաթղթերի մշակման աշխատանքներին.

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության կենտրոնական ապարատի վարչության պետ կարող է նշանակվել փրկարարական ծառայության այն ծառայողը, որը նշանակման պահին զբաղեցնում է փրկարար ծառայության ղեկավարի կամ տեղակալի պաշտոն, բարձրագույն խմբի պաշտոն կամ մեկ տարի զբաղեցրել է գլխավոր խմբի պաշտոն և ունի փրկարար ծառայության փոխգնդապետից ոչ ցածր կոչում կամ ունի հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ ունի չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

1. Աշխատակազմի կառավարում

2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ

3. Որոշումների կայացում

4. Ծրագրերի կառավարում

5. Խնդրի լուծում

6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում

2. Փոփոխությունների կառավարում

3. Բողոքների բավարարում

4. Ժամանակի կառավարում

5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության գեներալ-մայորի կոչում:

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2025թ.օգոստոսի 5-ի N 61-L հրամանով

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2023թ.հուլիսի 13-ի N 17-L հրամանով

ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը.

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հոգեբանական աջակցության և բժշկական ապահովման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.1-Գ-1).

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին.

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Վարչության պետի տեղակալին անմիջականորեն ենթակա են Վարչության բաժնի պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները Գործառույթները՝

1. իր իրավասության սահմաններում ապահովում է Վարչության ստորաբաժանումների գործունեության ղեկավարումն ու համակարգումը, կազմակերպում է նրանց աշխատանքները.

2. Վարչության պետի բացակայության դեպքում փոխարինում է նրան.

3. անձնական պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ, պաշտոնի անձնագրով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների կատարման համար.

4. լուծում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներ, Վարչության պետին ներկայացնում՝ առաջարկություններ.

5. իր իրավասության շրջանակներում շփվում է Փրկարար ծառայության տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալին (այսուհետ՝ Տնօրեն), նրա տեղակալների, Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների պետերի ու ծառայողների հետ, մասնակցում է նիստերի, խորհրդակցությունների, ապահովում է Վարչության բաժինների և այլ մարմինների փոխհարաբերությունները.

6. մասնակցում է Ծառայության և Վարչության ռազմավարական ու կազմակերպչական նշանակության խնդիրների իրականացմանն ուղղված գործողություններին, լուծում է մասնագիտական նշանակության խնդիրներ, ներկայացնում է առաջարկություններ.

7. ապահովում է Վարչության անձնակազմի աշխատանքային և ծառայողական կարգապահությունը, սպառաստականությունը, Վարչության պետին ներկայացնում է առաջարկություններ՝ նրանց խրախուսելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերի լուծման համար.

8. Տնօրենի (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի) և Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Իրավունքները՝

1. զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.

2. իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.

3. ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.

4. մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
5. աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
6. իրավական պաշտպանությունը:
7. առողջության պահպանումը.
8. փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
9. նշանակման արդյունքները բողոքարկելը.
10. արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
11. մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- ապահովել Վարչության կողմից իրականացվող հոգեբանական և բժշկական ծառայությունների կազմակերպման, համակարգման և վերահսկման գործընթացների պատշաճ իրականացումը՝ համահունչ արտակարգ իրավիճակներում պետական աջակցման ռազմավարությանը.
- ապահովել արտակարգ իրավիճակներում հոգեբանական ծառայության կազմակերպման ուղղությունների մշակումը և հիմնախնդիրների պլանավորումը.
- ապահովել «911» և թեժ գծերի միջոցով մուտքագրվող հոգեբանական խորհրդատվության և տեղում աջակցության գործընթացի համակարգումը.
- ապահովել ահազանգողների տվյալների գրանցման, տեղեկատվության անվտանգության պահպանման և կարգապահ օգտագործման իրականացումը.
- ապահովել բնակչության հոգեվիճակի կայունացման և բացասական վարքագծի կանխարգելմանն ուղղված միջամտությունների իրականացումը մասնագիտական մեթոդների կիրառմամբ.
- ապահովել արտակարգ դեպքերի վայրում հոգեբանական աջակցության կարիք ունեցող անձանց հաշվառման, դասակարգման և աջակցման գործընթացների վերահսկումը.
- ապահովել համագործակցության կազմակերպումը հոգեբանական ծառայություններ մատուցող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ.

- ապահովել տեղային տարածքներում հոգեբանական խորհրդատվության մատուցումը՝ դիմողի և խորհրդատուի համաձայնությամբ.
- ապահովել հոգեբանական բնութագրի, թեստերի, հարցաշարերի և գործիքների մշակումը՝ հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման նպատակով.
- ապահովել քաղաքացիների և ծառայողների անհատական և խմբային թեստավորման, հարցազրույցների անցկացումն ու տվյալների մշակումը.
- ապահովել բնութագրերի, եզրակացությունների, սարքավորումների տվյալների կազմումն ու շտեմարանների ձևավորումը.
- ապահովել ստորաբաժանումների անձնակազմի դիագնոստիկ և վերականգնողական պլանների հաստատումն ու կատարման վերահսկումը.
- ապահովել փրկարարների հոգեբանական ծանրաբեռնվածության կանխարգելման և նվազեցմանն ուղղված առաջարկությունների կազմումն ու ներկայացումը.
- ապահովել մասնագիտական աշխատանքային խմբերի ձևավորումը հոգեֆիզիոլոգիական և վերականգնողական գործընթացների իրականացման նպատակով.
- ապահովել համակարգման և զարգացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը հոգեբանական ծառայության արդյունավետության բարձրացման համար.
- ապահովել անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացման ուսումնամեթոդական գործընթացների իրականացումը.
- ապահովել տեղեկատվական հոսքի և հոգեբանական ծառայության ընթացակարգերի համակարգումը՝ իր իրավասության սահմաններում.
- ապահովել պլանների, հաշվետվությունների և եզրակացությունների կազմումն ու ներկայացումը ղեկավարությանը, ստորաբաժանումներին և լրատվամիջոցներին.
- ապահովել շտեմարանների արդիականացումը և մասնագետների միասնական բազայի ստեղծումը՝ մասնագիտացված հաստատությունների հետ համագործակցությամբ.
- ապահովել վերլուծությունների և առաջարկությունների ներկայացումը սարքավորումների ձեռքբերման, տարածքների կահավորման և գործընթացների արդյունավետության բարձրացման վերաբերյալ.

- ապահովել կառույցի ներկայացվածությունը միջազգային գիտաժողովներում, սեմինարներում և կոնֆերանսներում՝ լավագույն փորձի կիրառմամբ.

- ապահովել փրկարարների համար առաջին հոգեբանական օգնության դասընթացների կազմակերպումն ու վերահսկումը.

- ապահովել փրկարար ծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կազմակերպումը և վերահսկումը.

- ապահովել վնասվածքների, հիվանդությունների և խեղումների պատճառահետևանքային կապի գնահատման գործընթացի կազմակերպումը.

- ապահովել դիսպանսեր հետազոտությունների իրականացումն ու համապատասխան եզրակացությունների տրամադրումը փրկարարներին,

- ապահովել փրկարարների, նրանց ընտանիքի անդամների և կենսաթոշակառուների բժշկական սպասարկման կազմակերպումը.

- ապահովել արտակարգ իրավիճակներում տուժած քաղաքացիների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը.

- ապահովել ներգրավված անձնակազմի բժշկական սպասարկման և առողջության պահպանման կազմակերպումը արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներում.

- ապահովել Վարչության ամսական աշխատանքային պլանների և հաշվետվությունների մշակումն ու ներկայացումը տնօրենին կամ նրա տեղակալին՝ ըստ իրավասության.

- ապահովել մասնակցությունը միջազգային համաժողովներին, դաշտային վարժանքներին և իրավաչափ փաստաթղթերի մշակման գործընթացներին.

- ապահովել Վարչության տարեկան միջոցառումների պլանի մշակումը և դրա կատարման վերահսկումը.

- ապահովել առաջին օգնության դասընթացների կազմակերպումը բժշկական կազմավորումների և փրկարարների համար՝ փաստաթղթային ձևակերպմամբ.

- ապահովել «INSARAG»-ի որակավորում ստացած թիմերի բժշկական սարքավորումների և գույքի նկատմամբ վերահսկողությունը.

- ապահովել «INSARAG»-ի թիմի բժշկական ապահովման կազմակերպումը ըստ սահմանված ընթացակարգերի.

- ապահովել Վարչությունում շուրջօրյա շտապ բժշկական օգնության հերթապահության իրականացումը.

- ապահովել բնակչության բժշկական խորհրդատվության տրամադրումը «911» հեռախոսահամարով արտակարգ իրավիճակներում.

- ապահովել արտակարգ իրավիճակներում տուժած քաղաքացիների բժշկական օգնության տրամադրման վերահսկումը քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ.

- ապահովել ներգրավված անձնակազմի բժշկական սպասարկումը արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ընթացքում.

- ապահովել Վարչության պլանների և հաշվետվությունների մշակումն ու գործնական իրականացումը.

- ապահովել համագործակցությունը միջազգային կառույցների հետ՝ մասնագիտական քննարկումներին, վարժանքներին և փաստաթղթերի մշակմանը մասնակցելու նպատակով.

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարարական ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող են նշանակվել այն ծառայողները, որոնք մինչև նշանակումը վերջին երկու տարում զբաղեցրել են փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն և ունեն փրկարար ծառայության մայրից ոչ ցածր կոչում կամ ունեն հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում է որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է Փրկարար ծառայության գնդապետի կոչում:

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2025թ.օգոստոսի 5-ի N 61-Լ հրամանով

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2023թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԵՏԱՋԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հոգեբանական աջակցության և բժշկական ապահովման վարչության (այսուհետ՝ Վարչություն) անհետաձգելի բժշկական օգնության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ՝ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.1-Գ-3):

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին և Վարչության պետի տեղակալին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա են բաժնի ծառայողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ հրահանգիչ՝ հերթապահ բժիշկը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հրահանգիչ՝ հերթապահ բժիշկներից որևէ մեկը:

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8.

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. կազմակերպել և ղեկավարել Բաժնի գործունեությունը.
2. ստորագրում է Բաժնի անունից պատրաստված բոլոր փաստաթղթերը.
3. իրականացնում է Բաժնին հանձնարարված աշխատանքների կազմակերպումը, բաժնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը.
4. պարբերաբար Վարչության պետին հաշվետվություն է ներկայացնում կատարված աշխատանքների ու բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ.
5. իր իրավասության սահմաններում Վարչության պետին (Վարչության պետի տեղակալին) միջնորդություններ է ներկայացնում ենթակային պատասխանատվության ենթարկելու, խրախուսելու, հերթական կոչումներ շնորհելու և ծառայության հետ կապված այլ հարցերով.
6. անձնական պատասխանատվություն է կրում Բաժնի գործունեության ընթացքում գաղտնիության ռեժիմի պահպանման և ղեկավարությանը զեկուցվող նյութերի օբյեկտիվության համար.
7. Վարչության պետի և Վարչության պետի տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.

- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- կազմակերպել բժշկական կազմավորումների և փրկարարների առաջին օգնության դասընթացները, դրանց համար անհրաժեշտ գործընթացները, ինչպես նաև փաստաթղթերի նախապատրաստման ու մշակման աշխատանքների իրականացումը.
- հսկողության իրականացնել INSARAG-ի արտաքին որակավորումն անցած Հայկական և ՀՀ մարզերի քաղաքային որոնողափրկարարական թիմերի բժշկական գույքի և սարքավորումների նկատմամբ.
- կազմակերպել INSARAG-ի արտաքին որակավորումն անցած Հայկական թիմի բժշկական ապահովումը.
- կազմակերպել և անհրաժեշտության դեպքում իրականացնել Վարչության անհետաձգելի և շտապ բժշկական օգնության շուրջօրյա հերթապահությունը.
- կազմակերպել 911 հեռախոսով բնակչությանը բժշկական խորհրդատվության տրամադրման աշխատանքները, արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման ցուցաբերումը.
- բժշկական օգնության ցուցաբերել ու սպասարկել արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին ընդգրկված անձնակազմին.
- կազմակերպել Բաժնի ամսական աշխատանքային պլանների մշակման և հաշվետվությունների կազմման աշխատանքները, դրանք ներկայացնել ներկայացում Վարչության պետին (Վարչության պետի տեղակալին).
- մշակել Բաժնի տարեկան հիմնական միջոցառումների պլանը.
- մասնակցել միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող համաժողովներին և քննարկումներին, դաշտային

վարժանքներին և անհրաժեշտ փաստաթղթերի մշակման աշխատանքներին.

- Վարչության պետի (Վարչության պետի տեղակալի) հանձնարարությամբ իրականացնել այլ գործառնություններ.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն բժշկական կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության գլխավոր պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, ով վերջին երկու տարում զբաղեցրել է փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն և ունեն փրկարար ծառայության մայրից ոչ ցածր կոչում կամ հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Զաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրառնքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության գնդապետի կոչում:

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2025թ.օգոստոսի 5-ի N 61-L հրամանով

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2023թ.հուլիսի 13-ի N 17-L հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՀԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
ԱՎԱԳ ՀՐԱՀԱՆԳԻՉ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԲԺՇԿ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հոգեբանական աջակցության և բժշկական ապահովման վարչության (այսուհետ՝ Վարչություն) անհետաձգելի բժշկական օգնության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ հրահանգիչ՝ հերթապահ բժիշկ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.1-Ա-8):

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ հրահանգիչ՝ հերթապահ բժիշկն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի ավագ հրահանգիչ՝ հերթապահ բժիշկը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ հրահանգիչ՝ հերթապահ բժշկի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի հրահանգիչներից որևէ մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8.

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Ավագ հրահանգիչը պատասխանատու է իր վրա դրված պարտականությունների և իրեն տրված առաջադրանքների ժամանակին և ճիշտ կատարման համար.

2. Բաժնի պետի բացակայության դեպքում կատարում է նրա պարտականությունները.

3. Մասնակցում է բաժնի ամսական և տարեկան պլանների մշակմանը, հսկողություն է սահմանում դրանց կատարման նկատմամբ, ամփոփում և տեղեկանք է ներկայացնում բաժնի պետին.

4. յուրաքանչյուր շաբաթվա աշխատանքային վերջին օրն ամփոփում և բաժնի պետին է ներկայացնում անցած շաբաթվա ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունը.

5. մշտապես աշխատանք է տանում իր մասնագիտական գիտելիքների բարձրացման ուղղությամբ:

6. Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իրականացնել բժշկական կազմավորումների և փրկարարների առաջին օգնության դասընթացների կազմակերպումը, դրանց համար անհրաժեշտ գործընթացները, ինչպես նաև փաստաթղթերի նախապատրաստման ու մշակման աշխատանքները.
- իրականացնել INSARAG-ի արտաքին որակավորումն անցած Հայկական թիմի բժշկական ապահովումը.
- իրականացնել Վարչությունում անհետաձգելի և շտապ բժշկական օգնության շուրջօրյա հերթապահությունը.
- իրականացնել 911 հեռախոսով բնակչությանը բժշկական խորհրդատվության աշխատանքները, արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման ցուցաբերումը.
- բժշկական օգնության ցուցաբերել ու սպասարկել արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին ընդգրկված անձնակազմին.
- իրականացնել Բաժնի ամսական աշխատանքային պլանների մշակման և հաշվետվությունների կազմման աշխատանքները, դրանք ներկայացնել Բաժնի պետին.
- մասնակցել Բաժնի տարեկան հիմնական միջոցառումների պլանի մշակման աշխատանքներին.
- Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնել այլ գործառույթներ.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն բժշկական կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո:

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում

4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության փոխգնդապետի կոչում:

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2025թ.օգոստոսի 5-ի N 61-Լ հրամանով

Հավելված N
հաստատված է ներքին գործերի նախարարի
2023թ.հոկտեմբերի 13-ի N 17-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՀՐԱՀԱՆԳԻՉ՝ ՀԵՐԹԱՊԱՀ ԲԺՇԿ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) հոգեբանական աջակցության և բժշկական ապահովման վարչության (այսուհետ՝ Վարչություն) անհետաձգելի բժշկական օգնության բաժնի (այսուհետ՝ Բաժնի) հրահանգիչ՝ հերթապահ բժիշկ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.1-Ա-9):

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի հրահանգիչ՝ հերթապահ բժիշկը անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի հրահանգիչ՝ հերթապահ բժիշկը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի հրահանգիչ՝ հերթապահ բժշկի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս հրահանգիչ՝ հերթապահ բժիշկը:

1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8.

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

- Բաժնի պետին, Վարչության պետին, Փրկարար ծառայության տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալին (այսուհետ՝ Տնօրեն)

տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ տեղեկատվավերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով.

- Աշխատանքներ է իրականացնում իր կարգապահական ու մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ.
- Իրականացնել Բաժնին հանձնարարված աշխատանքները, Բաժնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը.
- պարբերաբար Բաժնի պետին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների ու ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ.
- Վարչության պետի (տեղակալի), Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իրականացնել բժշկական կազմավորումների և փրկարարների առաջին օգնության դասընթացների կազմակերպումը, դրանց համար անհրաժեշտ գործընթացները, ինչպես նաև փաստաթղթերի նախապատրաստման ու մշակման աշխատանքները.
- մասնակցել INSARAG-ի արտաքին որակավորումն անցած Հայկական թիմի բժշկական ապահովման գործընթացին.
- իրականացնել Վարչությունում անհետաձգելի և շտապ բժշկական օգնության շուրջօրյա հերթապահությունը.
- իրականացնել 911 հեռախոսով բնակչությանը բժշկական խորհրդատվության աշխատանքները, արտակարգ իրավիճակներում և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ժամանակ տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման ցուցաբերումը.
- ցուցաբերել բժշկական օգնության և սպասարկել արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին ընդգրկված անձնակազմին.
- մշակել Բաժնի ամսական աշխատանքային պլանները և մասնակցել հաշվետվությունների կազմման աշխատանքներին.
- մասնակցել Բաժնի տարեկան հիմնական միջոցառումների պլանի մշակման աշխատանքներին.
- Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնել այլ գործառույթներ.
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր վիճակագրությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
